



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36  
հեռ. (0264) 6-15-11  
Էլ. հասցե: info\_gavar@aarhus.am

N AA-008

« 15 » Մայիսի 2014թ

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ  
ՊԱՐՈՆ Ա. ԵՐԻՑՑԱՆԻՆ

Տեղեկատվության ստանալու հարցում

Հարգելի պարոն Երիցյան

Մայիսի 13-ին Արգիճի գետից սևվող ՓՀԵԿ-ի խողովակները կրկին պայթել են ու ողողել շուրջըրոյրը: Պայթած խողովակների պատճառով քառասյին վիճակ է ստեղծվել տարածքում: Ջուրը ոչ միայն ողողել է գյուղացիների ցանքատարածքներն, այլև հսկայական փոսեր են առաջացել հոսքը հասել է մինչև տեղակայանքներ:

Տեղեկացնենք, որ այս «Արգիճի» ՀԵԿ-ի կառուցմանը հանրությունը դեմ էր արտահայտվել, բնապահպաններն ու գյուղացիները պահանջել էին, որ նոր ՇՄԱԳ կախազիծ մշակվի, քանի որ հինը ՀԵԿ-ի կառուցման ժամանակ վաղուց արդեն հնացած էր: ՀԵԿ-ը կառուցվել է՝ չունենալով նաև ջրօգտագործման թույլտվություն (նախկինում տրված ջրօգտագործման թույլտվությունը ՀԵԿ-ի կառուցման ու շահագործման պահին արդեն ուժը կորցրած էր, քանի որ սահմանված ժամկետներն անցել էին):

ՀԵԿ-ի գործունեության ու անբարեխիղճ կառավարման արդյունքում նմանատիպ իրավիճակ ստեղծվել է 2 անգամ. անցած տարի՝ հուլիսի 18-ին և սեպտեմբերի 10-ին, խողովակները, փորձարկման ժամանակ չքիմանալով ջրի բարձր ճնշմանը, պայթել էին և ողողել գյուղացիների ցանքատարածքները:

Արգիճի փոքր ՀԵԿ-ը շահագործում է «Հիդրոկոորպորացիա» ՍՊԸ-ն:

Հարգելի պարոն կախարար

Ահազանգում ենք ստեղծված տեխնածին աղետի մասին, և խնդրում տրամադրել տեղեկատվություն կախարար և և այս աղետների հետևանքով ջրջակա միջավայրին և բնակչությանը հասցված վնասների և դրանց վերականգնման աջաստանքների մասին:

Խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն, արդյոք Արգիճի փոքր ՀԵԿ-ի կախազիծը անցել է անվտանգության փորձաքննություն:

Կից հղումով կարող եք տեսնել ստեղծված իրավիճակը՝ նաև լուսանկարները

[https://www.facebook.com/photo.php?v=556875487766337&set=vb.100003316729464&type=2&theater:](https://www.facebook.com/photo.php?v=556875487766337&set=vb.100003316729464&type=2&theater)

Կանխավ շնորհակալություն  
Հարգանքով՝

Գավառի Օրինու կենտրոնի համակարգող՝

Լ. Մանյան





